

ՕՏԱՐԱԿԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ*

XX դարի համաշխարհային և հատկապես գոյապաշտական գրականության մեջ բավականին տարածված է իրականությունից, հասարակությունից և սեփական ինքնությունից օտարված միայնակ մարդու, այսպես կոչված «օտարի» կերպարը: Ֆրանսիական գոյապաշտության առաջին վեպերը՝ Ժան-Պոլ Սարտրի «Սրտխառնոցը» (1939) և Ալբեր Կամյուի «Օտարը» (1942) լույս են տեսել շատ ավելի ուշ, քան «նահանջի» գրականության՝ Շահան Շահնուրի և Զարեհ Որբունու առաջին՝ «Նահանջն առանց երգի» (1929) և «Փորձը» (1929) վեպերը, որոնց հերոսը ևս «օտարականն» է: Թեև այդ վեպերում օտարման թեման շեշտված ազգային բնույթ ունի, այսինքն՝ մարդը մի կողմից հասարակության մեջ իրեն օտար է զգում ազգային պատկանելության՝ հայ լինելու պատճառով, մյուս կողմից, փորձելով ձուլվել այդ հասարակությանը, օտարվում է իր ազգային ինքնությունից: Խոսելով գրական ուսուցիչների՝ իր վրա ազդեցություն թողած հեղինակների մասին, ամերիկահայ մեծանուն արձակագիր Հակոբ Կարապենցը շատ հեղինակների թվում տալիս է նաև Շահնուրի անունը՝ նշելով, թե վերջինս է հենց իրեն սովորեցրել պատկերել «օտարականի ցավը»¹, մյուս կողմից նշում է նաև Սարտրի, Կամյուի, այսինքն՝ գոյապաշտական գրականության հիմնական հեղինակների և Բեկետի (Բեկետը աբսուրդի գրականության հիմնադիրներից է, այսինքն՝ Կարապենցի վրա ազդեցություն են թողել ոչ միայն գոյապաշտները, այլև աբսուրդի գրականությունը) անունները²: Այսպիսով, հեղինակն ինքն է հուշում համաշխարհային և սփյուռքահայ գրականության հետ իր արձակի ունեցած որոշ աղերսներ ու զուգահեռներ:

Կարապենցի պատմվածքներից շատերի՝ հատկապես «Անծանոթ հոգիներ» շարքի հերոսը ևս միայնակ օտարականն է, Սիացյալ Լա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 01.02.2019:

1 Կարապենց Հ., Երկեր, Եր., Լաիրի, 1995, էջ 15:

2 Նույն տեղում, էջ 5:

հանգնեցնում հայտնված տարագիր հայը, ռուսը կամ հույնը: Այս շարքի պատմվածքներում մարդն անցորդ է, ապրում է կյանքն «անցորդի պես, անցողակի ու անձիգ, այնպես, ինչպես հատուկ է արհավիրքների բովից անցած մարդկանց (61):

Կոստան Զարյանի արձակում ևս մարդն *անցորդ* է, բայց Զարյանի *անցորդը* մշակութային հայացք ունի, մշակութաբանական դիտարկումներ ու ընդհանրացումներ է անում, իսկ Կարապենցի *անցորդը* չի կարողանում ըմբռնել շրջապատող աշխարհը, մարդկային անցուդարձն ու երթևեկը, կյանքի խելահեղ վազքը, որ խենթորեն սլանում է դեպի մահ: «Քաղաքը տնքալով ու գալարվելով պիտի շարժվի առաջ որպես կուպր ու պողպատե մի անտառ՝ Ուիլշըր պողոտայից սկսած մինչև Իսթ Լոս Անջելեսի ամենահետին փողոցները: Պիտի բեղմնավորվեն մարդկային ու մեքենական ձայները, վիթխարի վազքն ու շարժումը ինքնաշարժների, էլեկտրաքարշների և ամեն տարիքի, ամեն ցեղի մարդկանց: Եվ այդ ձայները պիտի ընդարձակվեն շարունակ, որպես գծերի մի չնաշխարհիկ սիմֆոնիա: Ու երբ երեկոյան ջլատված ու սպառված Լոս Անջելեսը հանգչի շարժանկարների, գարեջրատների, հյուրանոցների, եկեղեցիների և բոլոր չար ու բարի տների մեջ, դո՛ւ իմ թշվառ մահկանացու, պիտի ընդմիջտ բացակա լինես այս կրքոտ կյանքի աստվածային բեմից» (76): Այսպես, շարքի պատմվածքներով հատված առ հատված ամբողջանում է ամերիկյան մարդաշատ ու ահռելի քաղաքի՝ «քարակերտ» ու «մետաղաշեն» այդ «օվկիանի» պատկերն իր մարդկային հոսքով, ազգերի բաբելոնյան խառնաշփոթով, ինքնաշարժերով ու «ինքնաշարժի արգանդից» ելած մանուկներով, «այնքան որ նրանք ընտելացած էին մեքենային» (45):

Անցորդը Կարապենցի պատմվածքներում նկարագրում է ամերիկյան քաղաքների մեքենայացված կյանքը, որի իմաստն ու նպատակակետը խույս է տալիս իր ըմբռնումից: Գրողի հերոսների ընկալումը դիպուկ են բնորոշում Էժեն Իոնեսկոյի մի խոհագրության տողերը. «Ինձ երբեք չի հաջողվել լիովին ընտելանալ ո՛չ աշխարհի, ո՛չ այլոց, ո՛չ էլ հատկապես իմ գոյությանը: Պատահում է՝ զգում եմ, որ ձևը հանկարծ կորցնում է բովանդակությունը, իրականությունն անիրական է, բառերն իմաստագուրկ աղմուկ են սոսկ, այս տները, այս երկիրքն այլևս ոչ այլ ինչ են, քան ոչնչի ձակատը, մարդիկ կարծես *ինքնաբերաբար են շարժվում* (մեջբերումներում այս և ընդգծումները մերն են), առանց

պատճառի, թվում է՝ ամեն ինչ ցնդում է, ամեն ինչին (ներառյալ և ինձ) լուռ, անխուսափելի գահավիժում է սպառնում անհայտ մի անդունդ: Ի՞նչ մտահոգությամբ է այս ամենը կարողանում դեռ կանգուն մնալ: Եվ ի՞նչ է նշանակում այս ամենը՝ այս թվացյալ շարժումը, այս *թվացյալ լույսը*, իրերի այս տեսակները, աշխարհի այս տեսակը: Մինչդեռ ես այստեղ եմ՝ պատված արարման լուսապսակով, չկարողանալով հանգցնել այդ ծուխը, ոչինչ չհասկանալով, օտարված, կտրված չգիտեմ ինչից, որի պատճառով ինձ ոչինչ չի բավականացնում»³: Այս աշխարհզգացողությունը հարազատ է Կարապենցի պատմվածաշարի հերոսներին, և նրանք խորապես զգում են, թե ինչպես են ինքնաշարժերը, գնացքներն ու շլացուցիչ լույսերը՝ մտքի, երևակայության ու էլեկտրականության այդ միաձուլումը, շարժման ու կյանքի այդ արհեստական նմանակումը, դուրս մղում մարդուն, անտեսում նրա ներաշխարհը. մարդն ակամայից հանձնվում է աննպատակ հոսքի անդեմ ալիքին՝ կորցնելով իր դեմքը, անկարող լինելով պահել իր ինքնությունը, ջանալով «մոռանալ իր ներաշխարհը, հոգին համադրվել ընդհանուր հեքին, աննյութանալ, անէանալ ու դադարել» (43):

Եթե Կ. Ջարյանի արձակում *անցորդը* ենթադրում է ուշադրության համակ կենտրոնացում, վերլուծություն, ազգային ինքնության տարանջատում օտար մշակութային միջավայրում, ապա Կարապենցի պատմվածքներում՝ ուշադրության ու ես-ի կորուստ: «Հանձնվեց ալիքին ու դարձավ ծանապարհորդ 44): Եվ ամենևին էլ պատահական չէ, որ մարդկային կյանքը նեղանում, սահմանափակվում է մերթ նավի («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս»), մերթ գնացքի («Մի այլ քաղաքում»), մերթ հանրակառքի («Որևէ տեղից մինչև այստեղ»), մերթ էլ ինքնաշարժի խցիկով («Այստեղից մինչև հավիտենականություն»), այսինքն՝ պատմվածքները շարք են կազմում ոչ միայն թեմատիկ-գաղափարական, այլև կերպարային ու պատկերային միասնությամբ: Այսպես, որպես «անծանոթ հոգիների» հանդիպվալոր, որպես պատմվածքների գործողության վայր՝ Կարապենցն ընտրում է այնպիսի տեղանք, ուր մարդիկ հանդիպում են կարճ մի ընթացքում, սա նաև գոյության կարճատևության այլաբանությունն է. հանդիպում են, իսկ հետո հարկադրված են բաժանվել՝ չհասցնելով մինչև վերջ ձա-

3 Իոնեսկո Է., Եշումներ և հավելումներ, «Գարուն» ամսագիր, 2001, ապրիլ, էջ 94-95:

նաչել միմյանց՝ արձանագրելով սոսկ, որ անծանոթ ու օտար լինելով հանդերձ ինչ-որ հարազատություն է միավորում իրենց, և դա անցորդ, օտարական լինելու բոլորին բախտակից ու հարազատ դարձնող ճակատագիրն է. «Ըվ է այս անծանոթ հոգին, որ շարունակ իր ներաշխարհն է արտացոլում իմ գոյության մեջ» (54).- խորհում է շարքի համանուն պատմվածքի հերոսը:

Կարապենցի այս շարքի պատմվածքներում կյանքը ներկայանում է որպես ինքնաօտարված, հաճախ անգիտակից ընթացք, աննպատակ շարժում: Բոլոր օրերը կրկնում են իրենք իրենց, և մարդուն մնում է միայն անորոշ սպասումն ու գալիքի տենդը: Մարդը ապրում է սովորության ուժով. «Կյանքը դարձել էր մի բարի սովորություն, իսկ գալիքի տենդն ու երազը՝ մի տեսակ հոգեկան մարզանք» (61): Մարդկային գոյության պայմանը դառնում է սպասումը՝ ընդ որում անիմաստ. «Մինչև երեկո, վերիվար վազող փողոցներում եռուզեռ էր տիրում, սակայն մթնշաղն իջնելուն պես, մարդիկ փակվում էին իրենց պարզ, կոկիկ միհարկանի տներում, լույսերը վառում, վարագույրները վար քաշում և սպասում վաղվան» (61): Ուրվագծվում են նաև որոշակի աղերսներ Բեկետի «Գոդոյին սպասելիս» դրամայի հետ և դա հատկապես նկատելի է «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքում: Բեկետի դրաման մարդկային կյանքը հանգեցնում է սպասման և սպասումն անիմաստ ու ապարդյուն դարձնելու միջոցով՝ իմաստագրելով մարդկային գոյությունը. հերոսները՝ Վլադիմիրն ու Էստրադոնը սպասում են ոմն Գոդոյի, թեև չգիտեն՝ ով է նա, երբ է գալու, և գալու է արդյոք, թե՞ ոչ: Անգլիացի գրականագետ Քեննեթ Թայնենը Բեկետի պիեսի հերոսների անհեթեթ սպասման իմաստը փորձում է բացատրել Ռասկոլնիկովի խոհերով. ««Ուձիր և պատժի» հերոսը խորհում է, որ եթե մահվան դատապարտվածին մահապատժի փոխարեն առաջարկեին «հազար տարի կամ ամբողջ հավերժություն կանգնել մի արշին տարածության ներսում, նա կգերադասի ապրել այդպես, քան մեռնել այդ պահին»⁴: Գրականագետը նկատում է, թե «Գոդոյին սպասելիս» դրաման նախատեսված է բեմադրել մթության մեջ, քանի որ «մթության մեջ ժամանակ անցկացնելը ոչ միայն դրամայի, այլև կյանքի էությունն է»⁵: «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքում Արմե-

4 Тайнен К., На сцене и в кино, М.; 1969, с. 64.

5 Նույն տեղում՝ стр. 63:

նը, Արտավը և Վլադիմիրը (հետաքրքիր է, որ Կարապենցի հերոսը նույն անունն է կրում, ինչ Բեկետի հերոսը) հանդիպում են մթության մեջ: «Փայլատակեց երկինքը: Կայծակի սլաքների տակ վայրկենական լույսի մեջ ողողվեց Արտավի դեմքը: Իր կիսադեմը գեղեցիկ էր, և ժպիտի, անրջի պես բան կար նրա շրթներին» (72): Այսպես մի փայլատակման, լույսի ակնթարթային բռնկման պահին գոյության խավարում հանդիպած անծանոթները նայում ու չեն ձանաչում միմյանց: «Թեև մտերիմներ էինք, բայց մի ինչ-որ անտեսանելի անջրպետ կար մեր միջև, որ արգելք էր հանդիսանում մեր անհատականությունների մերձեցման, շաղկապման: Օտար էինք, բացակա ու գրեթե խորթ: Թերևս այդպես ավելի լավ էր: Մեր աշխարհներն ավելի անառիկ էին՝ ծովերի կրծքում ցցված լեռկ ապառաժների նման» (63):

Մարդկանց կղզյակների հետ համեմատությունը Կարապենցի նախասիրած, պատմվածքներից մի քանիսում կրկնվող համեմատություն է. «Հանկարծ անդրադարձա, որ ես, Արմենը, Էվան, դիմացի նորեկ հաստափորը և դեռ կիսամութում շարժվող ու անշարժ ձանապարհորդները, բոլորս, մի-մի կղզյակներ ենք իրական ու մեր ներաշխարհի ծովերում կիտկիտված՝ միմյանցից բաժան, մենակ ու հեռավոր» («Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս», 35-36): Ծարքի համանուն՝ «Անծանոթ հոգիներ» և այլ պատմվածքներում ևս կրկնվում է այս փոխաբերությունը: «Գնացքի մեջ բոլորը միմյանց էին նայում առանց տեսնելու: Թվում էր, թե ամեն ոք ուներ իր ներքին կղզին, որին կառչած՝ պահպանում էր իր գոյությունը: «Իսկ ի՞նչ կղզին,- մտածեց Սուրենյանը,- ես ո՞վ եմ և ի՞նչ գործ ունեմ այստեղ: Այս մարդիկ գոնե մի նպատակ, մի ուղղություն ունեն: Իսկ ես ո՞ր եմ քարշ տալիս իմ անիմաստ գոյությունը» (44): Այսպիսով նավը, գնացքը, էլեկտրաքարշը, մեքենան կեցության մեջ դրված մարդկային գոյության խորհրդանշաններ են: «Վերջերս ո՞վ է գնացել Հալիֆաքս» պատմվածքում «Բլոունզ» անունով նավի մասին ասվում է. «Կարծես «Բլոունզը» երբեք ափ չպիտի հասներ: Նավի մեջ ստեղծվել էր մի առանձին տիեզերք, որը որևէ առնչություն չուներ ընդհանուր տիեզերքի հետ» (40): Անշուշտ ծովն իբրև խորհրդանիշ հիշեցնում է Լևոն Ծանթի «Հին աստվածներ» դրաման: Հիշենք արեղայի խոսքերը Ծանթի դրամայում. «Ինձի կթվի թե ծովը... ծովը սիրտն է բնության»: Մեկ այլ տեղ՝ «ծովը, սրտիս ծովը»: «Ծովը, որ մայրն է կյանքի, տառապանքի ու պայքարի...» (35),- արեղայի ոճով

ասում է Կարապենցի հերոսը՝ Արմենը (այս անունը՝ որպես հայի հատուկ անուն հանդիպում է նաև այլ պատմվածքներում՝ շեշտելով, որ Կարապենցի օտարականը տարագիր հայն է, ինչպես Շահնուրի վեպում), որ անսահման մենակ է զգում իրեն: Այդ մենությունը, որից խորապես տառապում է, նա բնորոշում է «ահռելի» մակդիրով: Զրուցակցի առարկությանը, թե Արմենն անընդհատ շրջագայում է և որպես ջութակահար մշտապես շրջապատված է հասարակությամբ, ինչո՞ւ պիտի մենակ զգա իրեն, նա պատասխանում է, թե խոսքը «հոգեկան մենության մասին է» (29):

Պատմվածքի հենց սկզբում հիշվում է ծովը և ակնարկվում, որ հերոսը ծովը պիտի նետվի: «Մարդը կարծես հաշիվ ունի ծովի հետ», հերոսին ծովը հիշեցնում է «մահվան անխուսափելիության մասին» (27): Ծանթի արեղայի նման Արմենը ևս նետվում է ծովը: Թե՛ Ծանթի դրամայում, թե՛ Կարապենցի պատմվածքում հերոսների ծովը նետվելը մի տեսակ երկիմաստ է. կարելի է հասկանալ, որ արեղան անձնասպան է լինում, բայց կարելի է հասկանալ նաև, որ աշխարհիկ կյանքն է կլանում նրան: Կարապենցի պատմվածքը ևս խորհրդանշական ավարտ ունի: «Ջգացի, որ Արմենը խուսափում է իր ներաշխարհի փականքները բացելուց: Արդեն իմ հանդիպման առաջին իսկ պահիս ես եմ եղել հարձակվողը: Ուզեցի այլևս չհետապնդել և հանգիստ թողնել նրան իր մենության ծովում»: Կարելի է հասկանալ, որ Կարապենցի հերոսն անձնասպան է լինում, բայց կարելի է ասել նաև, որ նրան կլանում է «մենության ծովը», չէ՞ որ մեկ այլ տեղ նա իր մենությունն անվանում էր «ահռելի», ինչպես ահռելի կարելի է կոչել ծովը, այսինքն՝ պատմվածքում ծովն ուղղակիորեն դառնում է մենության փոխարկություն:

Այս պատմվածքը հիշեցնում է նաև Շահնուրի «Պձեղ մը անուշ սիրտ»-ը: Եպրաքսե «հանըմ»-ին Կարապենցի պատմվածքում փոխարինում է Զորջ Բոյաձյանը: Երկու պատմվածքում էլ՝ մեկում հանրակառքում, իսկ մյուսում նավի մեջ, իրար են հանդիպում երկու «անծանոթ հոգի»՝ երկու հայ, և ինչպես Շահնուրի «հայ մայրը» անձնասպանությունից չի կարողանում ետ պահել Նորայրին, այնպես էլ Զորջ Բոյաձյանը չի կարողանում ետ պահել Արմենին: Բայց եթե Բոյաձյանը, որ անհաղորդ խառնվածքի տեր անձնավորություն լինելով, Արմենին փրկելու համար զգում է սեփական պատյանից դուրս գալու դժվարությունը («Իմ ծանոթների ու գործակիցների մոտ ես միշտ անհաղորդ

մեկի համբավ եմ ունեցել, քաղաքավարի՝ սակայն անհաղորդ: Հիմա ի՞նչ պատահեց, որ Ֆանդիի ծոցը կտրելիս և այն էլ այսպիսի գեհեմային մի գիշեր, ես պիտի դուրս գայի իմ հղկված պատյանից և հաղորդվեի մի անծանոթ երիտասարդի ցավով»(38), օտարման անջրպետը հաղթահարելու անկարողությունը, ապա եպրաքսե «հանըմը» ձիշտ նրա հակապատկերն է, նրան թվում է, թե հայ անծանոթ երիտասարդին ինքը վաղուց է ծանաչում: «Ի՞նչ օտա՞ր. երբե՞ք. երբեք օտարներ չէին: Ինքը շատո՞նց է, որ կը ծանչնար Նորայրը»: Եթե Բոյաձյանին Արմենի անձնասպանությունը կյանքի անցողիկության ու մահվան անխուսափելիության խոհերի է դրդում, ապա «բուխ սիրտ» ունեցող «հայ մորը» Նորայրի անձնասպանության միտքը պարզապես խենթացնում է:

Հավանաբար հայկական՝ Բոյաձյան ազգանվան հետ հերոսին օտար անուն տալով հեղինակը հետևում է շահնության ավանդույթին. չէ՞ որ «Նահանջն առանց երգի» վեպում Պետրոսը դառնալով Պիեռ, իսկ «ՊՃեղ մը անուշ սիրտ»-ում՝ Նորայրը հյուրանոցի ֆրանսիացի տերերին հասցեագրված նամակում ստորագրելով «Ռուպեռ», օտարանում են իրենք իրենցից՝ իրենց ազգային ինքնությունից: Ջորջը չունի իր հայկական անունը և հետաքրքիր է, որ նա Արմենին ոչ այնքան որպես հայ, այլ որպես օտարական է ընկալում արդեն: Նա ազգային ինքնությունից օտարված, իր «նահանջը» ապրած կերպար է: Հատկանշական է նաև, որ Արմենը հենց հայի անուն է, և նա իրեն միայնակ է զգում՝ որպես հայ: Նրա ցավը նույն՝ Շահնուրի վեպում անձնասպան լինող Զարեհի և Նորայրի ցավն է (ի վերջո Արմենն էլ վերջիններիս պես անձնասպան է լինում), ովքեր չեն կարողանում տանել տարագրությունը: Դա օտար երկրներում թափառող, անհայրենիք մնացած հայի մեծության անբուժելի ցավն է: Հետաքրքիր է, որ նա կորցրել է իր սիրած աղջկան՝ Սեդային, որ հայրենադարձվել ու Արմենի համար նույնացել է Հայաստանի հետ, և սիրո կորստի ցավը նույնպես նույնանում է հայրենիքից զրկված լինելու ցավի հետ. պատահական չէ նաև, որ հերոսը երաժիշտ է. այդ ցավը լսվում է Արմենի ջութակի՝ անծանոթ մարդկանց «ներաշխարհների ցանկապատերը» քանդող երաժշտության մեջ: Բայց Արմենը չի կարող մեկնել Հայաստան. համայնավարությունն անընդունելի է նրա համար: «Խնդրում եմ ինձ ներքե իմ պողոթկումների համար,- ասում է նա Ջորջ Բոյաձյանին,- այդպես է

պատահում, երբ Հայաստանի մասին են խոսում: Այնպիսի անանուն կարող ունեն այդ երկրի նկատմամբ, որ ուղղակի այրում է հոգիս: Այլևս Հայաստանն ու Սեդան նույնացել են: Երկուսին էլ սիրում են հավասար կրթով ու պաշտամունքով և երկուսն էլ այնքան անմատչելի են ու կիզիչ՝ ինչպես արևը...» (39):

Բանալի բառեր. - գոյաբանություն, Սփյուռք, անցորդ, մշակույթ, օտարական:

Г. СААКЯН

Образ незнакомца в рассказах Агопа Карапенца.

Резюме

Герой многих рассказов Карапенца - одинокий незнакомец, эмигрант армянин, русский или грек, который оказался в Соединенных Штатах. Как место действий для своих рассказов он выбирает такую среду, где люди встречаются за короткий промежуток, но затем вынуждены расставаться, не успевая узнавать друг друга до конца, фиксируя лишь то, что несмотря на то, что они не знакомы и чужды, их объединяет какая-то родственность, и это судьба, которая делает всех родственными прохожими незнакомцами.

Ключевые слова: антропология, диаспора, прошлое, культура, незнакомец

G. SAAKYAN

The character of a stranger in the stories of Hakob Karapents.

Summary

The hero of many stories of Karapents is a lonely stranger, a refugee Armenian, Russian or Greeks who have appeared in the United States, and as a place of action, he chooses a place where people meet in a short period of time, but then they are forced to divorce, even without managing recognize each other to the end, just recording, even being a stranger, some kind of affection unites them, and it's the fate that makes everyone be a friendly wayfarer stranger.

Keywords: anthropology, diaspora, past, culture, stranger.